

Մայիս 15, 1979

Հոգեշնորհ

Տ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան
Հովհան Ս. Երրորդութիւն Նկեղեցւոյ
Առաջնորդի Փոխանորդ Գանատայի
Թորոնթօ.

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդը համոյքով կը տեղեկացնէ որ Տարեկան Թեմական Պատգամաւորական ժողովին առթիւ կազմակերպուած Հայ Դպրոցներու Ուսուցչաց Համագումարը այս տարի եւս արձանագրեց մեծ յաջողութիւն։

Այս առթիւ Ուսումնական Խորհուրդը իր գնահատանքը կը յայտնէ Թորոնթոյի առաջին Հայ Դպրոցը հանդիսացող համայնքիդ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Դպրոցի Խնամակալութեան եւ Տնօրէնութեան՝ որոնց կարգադրութեամբ ամէն տարի կանոնաւոր կերպով մեծ թիւով ուսուցիչներ եւ Խնամակալութեան անդամներ ներկայ կը գտնուին այս համագումարներուն։

Ուրախութեամբ կը հաստատենք նաեւ որ համայնքիդ Հայ Դպրոցը ամբողջութեամբ որդեգրած է Ուսումնական Խորհուրդի ուսման ծրագիրը եւ կը գործածէ անոր կողմէ պատրաստուած դասագիրքերն ու ուսուցման օժանդակող նիւթերը, ինչպէս նաեւ միշտ կապ կը պահէ Առաջնորդարանի Կրթական Ծեսուչ Օր. Սիլվա Տէր Ստեփանեանի հետ՝ ծանօթանալու համար ուսուցման նոր մեթոդներուն եւ հրատարակութեանց մասին։

Նկատի ունենալով Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայ Դպրոցի աշակերտութեան մեծ թիւը՝ առիթ արուած է որ ամէն տարի Ուսուցիչներու Պատրաստութեան միշտաթեայ Յայտագրին համայնքէն ուսուցիչ մը մասնակցի, որպէս զի անոնք մանկավարժական նոր գիտելիքներով զինուած շարունակեն իրենց ազգօգուտ գործը եւ իրենց ներկայացուած նորութիւնները փոխանցեն իրենց պաշտօնակիցներուն։

Ուսումնական Խորհուրդի անունով համայնքիդ Հայ Դպրոցի Խնամակալութեան, Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին կը մաղթեմ առաւել խանդավառութիւն՝ համբերութեամբ եւ յարատեւութեան յառաջ տանելու համար իրենց ստանձնած ազգանուէր եւ կրթանուէր պարտականութիւնները։

Խորին յարգանօք՝

Նոււպար Քիւփէլեան
Ատենապետ Ուսումնական Խորհուրդի